

Բ Ե Ջ Մ Ե Ա Լ Գ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵՑ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 7.

1843

ԱՊՐԻԼԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ԼճԻՆԻ ԲԵԾԵՐ :

ԳՆՈՒՆԱՒՈՐ ապակիով մը թէ որ արեւուն նայելու ըլլաս, ճառագայթներուն սաստկութիւնը աչքդ չեն ցաւցըներ, և ուղածիդ չափ կրնաս դիտել, ու տեսնել որ արեւուն վրայ սե սե բծեր՝ կան իրեն հասարակածին մօտ, և տեղ տեղ ալ կերեւան լուսաւոր կէտեր : Ի՞նչերը արեւուն սկաւառակին վրայ միշտ չեն երեւար, հապա 14 օր միայն կերեւան . ամէնը մէկէն՝ առանց իրարմէ հեռանալու արեւելքէն դէպ արեւմուտք կը շարժին, ետքը աներեւոյթ կը լլան . 14 օրէն ետքը նորէն կը տեսնուին, ու 14 օրէն դարձեալ չտեսնուելու կը լլան : Ուստի աս կերպով կանոնաւոր ընթացքէն կը հաստատուի թէ արեւը առանձին շրջան մը ունի իր առանցքին վրայ, և գրեթէ 28 օրուան մէջ կը կատարէ իր շրջանը :

Իսկ շատ բծեր ալ կան որոնց շարժումը անկանոն է . վասն զի երբեմն մէկտեղ կը ժողովուին, երբեմն իրարմէ կը հեռանան, երբեմն երկայն առ տեն կը տեսնուին, ու վաթսուն՝ եօ-

թանասուն օրէն ետքը բոլորովին կը կորսուին, աներեւոյթ կը լլան : Ինչա՞ գէտները աս բծերուն բնութեանը վրայ ստոյգ տեղեկութիւն չունենալով, իւրաքանչիւր երեւոյթները մեկնելու համար շատ տեսակ կարծիքներ հանած են . ինչպէս ըսող եղաւ թէ բոլոր արեւուն գունտը բորբոքած նիւթ է, սե սե երեւած տեղուանքն ալ մէյմէկ հրաբուլիս . ոմանք ալ ըսին թէ արեւը դիմահար մարմին է՝ լուսաւոր մթնոլորտով, և աս բծերը արեւուն մթնոլորտէն դուրս ամպի պէս մարմիններ սեպեցին :

Հերշել տեսնելով որ աս բծերուն կեդրոնը սեւագոյն է, ու քովերը կարմրագոյն, և եզերքը քանի կերթայ ճերմակագոյն, և թէ շարունակ իրենց տարածութիւնը կը մեծնայ ու կը պզտիկնայ, և դիրքերն ին կը փոփոխի, ըսաւ թէ աս բծերը ծովսի կամ կազի պէս բաներ են, որ որչափ իրենց սե կեդրոնէն կը հեռանան՝ լուսաւոր մարմին կը դառնան :

Ոմանք կարծեցին թէ աս բծերը արեւուն հրաբուլիսներուն մէջէն դուրս ցատեալ նիւթեր են . իսկ լու-

սաւոր երեցած մասը՝ հրաբուխին բոցն է :

||մանք սեպեցին թէ արեւուն զանգուածը հալած նիւթ մըն է . իսկ բիծ երեցածները կղզիի պէս բաներ են, որ հալած նիւթին վրայ քիչ մը առեն կենալէն ետքը կընկըղմին ու լուսաւոր հեղուկին տակը կիջնան :

||մանք ալ թէ երեցած բծերը մանր մոլորակներ են որ արեւուն վրայ կը պտըտին ամենամօտիկ շրջաններով :

Իայց ետքի աստղաբաշխներուն աղէկ դիտակներով ըրած գննութեցը նայելով՝ ուրիշները կըսեն թէ արեւուն վրայ բիծ երեցած տեղուանքը խորունկ փոսեր են . և էն մեծերուն ընդարձակութիւնն է գրեթէ քառասուն հազար մղոն : Իսկ լոյսը արեւուն մթնոլորտն է ըսին . արեւը երբ մութիւն չունի, և եղած տաքութիւնն ալ լոյսէն առաջ կուգայ :

Ի՞նչ բծերէն ոմանք հինգ կամ վեցանգամ երկրէս մեծ են, և ասանկ մեծերը ինչուան յիսուն հատ կը համրուին : Արպատմեն թէ 626ին առենները արեւուն բծերը այնչափ շատցեր են որ արեւուն սկաւառակին կէսը բոլոր ամառը խաւարած մնացեր է : Ի՞նչ այսչափ քննութիւններէն ետքն ալ դեռ չեն կրցած իմանալ մարդիկ աս բծերուն ինչ ըլլալը :

Ի յանի բծեր :

||ՈՒՍՆԻՆ վրայ տեղ տեղ լուսաւոր փայլուն կէտեր կան, տեղ տեղ ալ մութ կամ անլոյս կտորներ, որ աղէկ դիտակով խիստ որոշ կը տեսնուին : Ի՞նչ լուսնի կամ վերջի քառորդի առեն դիտելու ըլլանքնէ՞ կը տեսնենք որ լուսնին շրջանակը կըսկըր չերենար . ասկէ կը հետեւի որ մակերևոյթը շիտակ չէ, հապա տեղ տեղ ցած ու բարձր, և երկրիս մակերևութին պէս լեռնոտ : Եւ ըլլալն ալ անկէ յայտնի է որ մութ եղերքը՝

լուսաւոր կողմին մօտ՝ կը տեսնուին լուսաւոր կէտեր, որ երթալով կամաց կամաց բոլորովին կը լուսաւորուին . ասով կիմացուի որ ան լուսաւոր կէտը լեռ պիտի ըլլայ, որ էն առաջ ծայրը արեւէն լոյս կառնէ, ետքը ինչուան իր ստորոտը՝ կը լուսաւորուի, նման երկրիս լեռներուն, որ առտուն կանուխ էն առաջ լեռներուն ծայրերը արեւէն կը լուսաւորուին, ետքը իրենց ստորոտը :

||Ուսնի լուսնի առենը, որ ամբողջ կիսագունտը հաւասար լուսաւորուած պիտի ըլլայ, կը տեսնենք որ ամէն տեղի լոյսը միակերպ չէ, հապա տեղ տեղ աւելի փայլուն՝ տեղ տեղ ալ մութ կէկ . աս յայտնի նշան է թէ լուսնին մակերևոյթը եղած նիւթը ամէն տեղ միակերպ չէ, որ լոյսն ալ միակերպ չցոլանար . ասկէ հետեւցուն թէ փայլուն տեղուանքը բարձր լեռներ են, ու մութ տեղերը ծով կամ լիճ, որոնց վրայէն լոյսը աղէկ չկրնար ցոլանալ . բայց Ի թրով աստղաբաշխը հաստատելէն ետքը թէ լուսնին մթնոլորտ չունի, կըսէ թէ ուր որ մթնոլորտ չկայ՝ հոն ոչ ջուր, ոչ բոյս, ոչ կենդանի և ոչ կրակ կըրնայ ըլլալ . ուրեմն կըսէ՝ աս լուսնին լեռնոտ անապատ ու անբնակ աստղ մըն է . ընդհակառակն շատ աստղաբաշխներ ալ տեսնելով որ լուսնին վրայ ծակեր փոսեր ու հրաբուխի բերաններ կան, կըսեն թէ հիմա ալ վառած հրաբուխներ պիտի ըլլան հոն՝ որ լուսնին բծերը տեղէ տեղ կը փոփոխին :

||Եկալ մոլորակներուն վրան ալ այլեւայլ բծեր կերենան, որը խոշոր՝ որը մանր . բայց ասոնց վրայ ալ ստոյգ տեղեկութիւն կամ խիստ հաւանական կարծիք մը չունին աստղաբաշխները :